

01/07/2008
համար 194-Ն

«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՆ ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 13-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի 10.03.09թ. թիվ 56-Ն, 30.03.09թ. թիվ 70-Ն, 28.07.09թ. թիվ 228-Ն, 22.09.09թ. թիվ 281-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Մ Ա Ն Է.

1. Հաստատել

1) «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» Կանոնակարգ 13-ը՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2) Վարկային կազմակերպության լիցենզիայի (այսուհետև՝ լիցենզիա) ձևը՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և

տեխնիկական հագեցվածության պահանջները» Կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 578 որոշումը (այսուհետ՝ Որոշում), բացառությամբ Որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալը, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» Կանոնակարգ 13-ի 32. կետի դ) ենթակետի և 46. կետի, որոնք ուժը կորցրած են համարվում 2009 թվականի հունվարի մեկից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 10-ի «Վարկային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուների ու հավակնորդների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման քննության թեմաների ցանկը» թիվ 203 Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Չավադյան

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
հուլիսի 1-ի թիվ 194 Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 13

**ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ,
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՆ
ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ,
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ԵՎ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում վարկային կազմակերպությունների հիմնադրման, գրանցման (ներառյալ փոփոխությունների գրանցման) և լիցենզավորման, վարկային կազմակերպությունների տարածքային ստորաբաժանումների՝ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման ու գրանցման, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման և գրանցման, վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման հարցերը, ինչպես նաև կանոնակարգում է վերոնշյալ հարցերի հետ կապված օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) իրավասությանը վերապահված այլ հարաբերությունները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող վարկային կազմակերպությունների, դրանց մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների, ինչպես նաև սույն կանոնակարգով սահմանված այլ անձանց վրա:

3. Վարկային կազմակերպությունն ունի իր հայերեն ֆիրմային անվանումը, որը պետք է բովանդակի՝ վարկային կազմակերպության անվանումը, վարկային կազմակերպության տիպը

(խումբը), կազմակերպական-իրավական ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք հիմնադիրները համարում են անհրաժեշտ:

Վարկային կազմակերպությունը կարող է ունենալ իր լրիվ ֆիրմային անվանումը կամ դրա կրճատ տարբերակը: Վարկային կազմակերպության կրճատ ֆիրմային անվանումը պետք է բովանդակի վարկային կազմակերպության անվանումը, կոնկրետ տիպը (խումբը), կազմակերպահրավական ձևը (հապավումներով):

4. Վարկային կազմակերպության գտնվելու վայրը նրա կանոնադրությունում նշված մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է: Վարկային կազմակերպությունը ֆինանսական գործառնություններ է իրականացնում մշտական գործող մարմնի գտնվելու վայրում (գլխավոր գրասենյակ) և մասնաճյուղերում՝ բացառությամբ սույն կանոնակարգի 79 կետով սահմանված դեպքերի:

5. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն: Ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն վարկային կազմակերպության իրավասու անձի կողմից, ընդ որում պատճենները պետք է ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

6. Սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը կարող են Կենտրոնական բանկ ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ Սի Բի Էյ Նետ միջբանկային համակարգչային ցանցի միջոցով:

ԳԼՈՒԽ 2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

7. Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում.

1) գրանցման և լիցենզավորման դիմումը՝ համաձայն հավելված 1-ի,

2) վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ վեց օրինակից: Եթե ստեղծվող կանոնադրության նախագծի մեջ հղումներ են կատարվել վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերին, ապա կից պետք է ներկայացվեն նաև համապատասխան իրավական ակտերը (նախագծերը): Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված, ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 14-ի,

3) վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի որոշումը՝ վարկային կազմակերպության ղեկավարներ նշանակելու մասին,

4) վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը՝ միջնորդագրի տեսքով համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի,

5) վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց համար հայտարարագիր՝ «Վարկային

կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին՝ համաձայն հավելված 3-1 կամ 3-2-ի,

6) վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի (հիմնադիրների ժողով) կողմից հաստատված վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելված 4-ի,

7) հայտարարագիր այն մասին, որ վարկային կազմակերպության գործունեության վայրը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 10-րդ գլխով սահմանված պահանջներին,

8) ֆիրմային անվանման գրանցման հայտը՝ համաձայն հավելված 16-ի, ինչպես նաև «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող փաստաթղթերը:

Կենտրոնական բանկը սույն կետով սահմանված փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու պահից մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը կամ մերժում է դրա գրանցումն ու լիցենզավորումը:

8. Կենտրոնական բանկը, Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) եզրակացության հիման վրա, գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե պահպանվել են հետևյալ պահանջները և ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը.

1) Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում բացված հաշվին ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը,

2) Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համարպատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների (այսուհետև՝ Կենտրոնական բանկի վերահսկողների) և պատասխանատու այլ աշխատակիցների կողմից տեղերում ստուգման արդյունքում հաստատվել է, որ վարկային կազմակերպության գործունեության համար նախատեսված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 10-րդ գլխով սահմանված պահանջներին,

3) վարկային կազմակերպության ղեկավարների որակավորումը և մասնագիտական համապատասխանությունը բավարարում է սույն կանոնակարգի 6-րդ գլխով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության պահանջներին և առկա չէ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը,

4) վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք ստացել են Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված կարգով:

9. Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (համաձայն սույն կանոնակարգի 5-րդ գլխի), իսկ վարկային կազմակերպության ղեկավարների

թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամների թեկնածուների) պետք է հերթագրվեն՝ ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը մասնակցելու համար (համաձայն սույն կանոնակարգի 35-րդ կետի), իսկ որակավորված լինելու դեպքում ներկայացնեն սույն կանոնակարգի 50-րդ կետի «ա» ենթակետով պահանջվող միջնորդագիրը:

10. Գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման պահից եռօրյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում են սույն կանոնակարգի հավելված 5-ով սահմանված գրանցման վկայականը և սույն որոշման հավելված 2-ով սահմանված լիցենզիան ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 17-ի:

11. Կենտրոնական բանկը լիցենզավորված վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

12. Վարկային կազմակերպությունը սահմանված կարգով գրանցվելուց և լիցենզավորվելուց հետո եռամսյա ժամկետում պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել տարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

13. Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝

1) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,

2) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ թվում՝

ա. չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը,

բ. վարկային կազմակերպությունը չունի վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման վկայական,

գ. առկա չէ պատշաճ կարգով տրված լիազորագիր այն դեպքում, երբ հիմնադիրները հանդես են գալիս լիազորված ներկայացուցչի (ներկայացուցիչների) միջոցով,

դ. վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին, գործունեության կանոնակարգում ներկայացված տվյալներն անարժանահավատ են, կանոնակարգում կատարված էական կանխատեսումները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով անիրատեսական են,

ե. վարկային կազմակերպության առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը կամ ներքին հսկողության համակարգը բավարար չեն վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար,

3) չեն պահպանվել սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված պահանջները՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

13.1. Լիցենզիայի վերաձևակերպման համար լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում՝ կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և լիցենզիայի վերաձևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է համապատասխան փոփոխությունները ներառող լիցենզիայի նոր օրինակը լիցենզավորված անձին տրամադրելու միջոցով՝ վերաձևակերպման ենթակա լիցենզիան Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում:

13.2. Լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում:

13.3. Կենտրոնական բանկը կարող է կասեցնել լիցենզիայի վերաձևակերպման ժամկետը մինչև մեկ ամիս ժամկետով, եթե լիցենզիայի վերաձևակերպումը պայմանավորված է վարկային կազմակերպության ֆիրմային անվանման փոփոխությամբ և եթե ֆիրմային անվանման փոփոխությունը ներառող կանոնադրության փոփոխության գրանցման ժամկետը սույն կանոնակարգի 72-րդ կետի համաձայն կասեցվել է:

14. Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը: Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը վարկային կազմակերպությանը տրամադրում է համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

15. Կորած լիցենզիան գտնելու դեպքում վարկային կազմակերպությունը գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

16. Նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների մասնակիցներին նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը տրամադրվում է սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված կարգով:

17. Նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների ղեկավարները գրանցվում են սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 2.1. ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

17.1. Սույն կանոնակարգի 7-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն Կենտրոնական բանկ գրանցման ներկայացված ֆիրմային անվանումը համարվում է գրանցված, եթե Կենտրոնական բանկի կողմից որոշում է կայացվում վարկային կազմակերպությունը գրանցելու և լիցենզիա տրամադրելու վերաբերյալ:

17.2. Վարկային կազմակերպության ֆիրմային անվանման փոփոխությունը համարվում է գրանցված, եթե Կենտրոնական բանկի կողմից գրանցվում է վարկային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

17.3. Վարկային կազմակերպության ֆիրմային անվանման փոփոխության գրանցումից հետո 7-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը կազմակերպությանն է հանձնում վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 17-ի, վարկային կազմակերպության գրանցման վերաձևակերպված վկայականը, մասնաճյուղի (ներկայացուցչության) գրանցման վերաձևակերպված վկայականը (առկայության դեպքում) և վերաձևակերպված լիցենզիան: Ընդ որում, վերաձևակերպված վկայականները և լիցենզիան տրամադրվում են վարկային կազմակերպությանը՝ նշված փաստաթղթերի հին տարբերակները Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում:

17.4 Վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը մերժվում է օրենքով սահմանված հիմքերով:

17.5 Ֆիրմային անվանման գրանցման վկայականի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը կարող է Կենտրոնական բանկ դիմում ներկայացնել վկայականի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով վկայականի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

17.6. Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած վկայականի կրկնօրինակը վարկային կազմակերպությանը տալիս է վարկային կազմակերպության համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

17.7. Սույն կանոնակարգի 7-րդ կետի 8-րդ ենթակետով և 73.1-րդ կետով սահմանված դեպքերում ֆիրմային անվանման գրանցման հայտը ստանալուց հետո Կենտրոնական բանկը «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում այդ հայտի սքան արված տարբերակը, ինչպես նաև «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ համապատասխան համաձայնության կամ թույլտվության սքան արված տարբերակը (առկայության դեպքում) էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնում է մտավոր սեփականության հարցերով լիազորված գործադիր իշխանության հանրապետական մարմին՝ ներկայացված ֆիրմային անվանման վերաբերյալ փորձագիտական եզրակացություն ստանալու համար: Որպես հայտը ներկայացնելու պահուստային եղանակ կարող է օգտագործվել էլեկտրոնային կրիչը:

ԳԼՈՒԽ 3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒՃԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

18. Օրենքով սահմանված հիմքերով վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման պատճենը և դրա կայացման հիմքերը ստանալով, վարկային կազմակերպությունը կից գրությամբ լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը հիմք չէ մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիցենզիան չվերադարձնելու համար:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ և ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՍԵՐԺՈՒՄԸ

20. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերի բացման և գրանցման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը,

2) վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ստեղծման և մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,

3) մասնաճյուղի հաստատված կանոնադրությունը (3 օրինակ): Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված, ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 14-ի,

4) ստեղծվող մասնաճյուղի ղեկավարների (մասնաճյուղի կառավարիչ, առկայության դեպքում նաև գլխավոր հաշվապահ) գործունեության մասին տեղեկանքը՝ միջնորդագրի տեսքով համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի,

5) տարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

6) սույն կանոնակարգի 10-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,

7) մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

8) հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 15-ի:

21. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր (կամ

ներկայացուցչություններ) ստեղծելիս ստանում են Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 20-րդ կետի 1), 2), 3) և 4) ենթակետերով (իսկ ներկայացուցչությունների համար սույն կանոնակարգի 24-րդ կետի 1), 2), 3) և 4) ենթակետերով) սահմանված փաստաթղթերը: Պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում, Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, վարկային կազմակերպությանը տրվում է օտարերկրյա պետության տարածքում մասնաճյուղ (կամ ներկայացուցչություն) բացելու համաձայնություն:

22. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր (կամ ներկայացուցչություններ) բացելիս այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ պետությունում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո յոթ օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ Կենտրոնական բանկում գրանցվելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության տարածքում վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման համար պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո Կենտրոնական բանկի վերահսկողների և պատասխանատու այլ աշխատակիցների կողմից տեղերում կատարվում է տարածքի և տեխնիկական հագեցվածության ստուգում, որի արդյունքում կազմվում է ստեղծվող մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության՝ սույն կանոնակարգի 10-րդ գլխով սահմանված չափանիշներին համապատասխանության մասին փաստաթուղթ:

Հայաստանի Հանրապետության տարածքում վարկային կազմակերպության մասնաճյուղի (կամ ներկայացուցչության) գրանցման համար պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, մասնաճյուղը (կամ ներկայացուցչությունը) գրանցվում է և տրվում է վարկային կազմակերպության մասնաճյուղի (կամ ներկայացուցչության) գրանցման վկայական՝ համաձայն հավելված 6-ի (իսկ ներկայացուցչության համար՝ համաձայն հավելված 7-ի):

Վարկային կազմակերպության մասնաճյուղի (կամ ներկայացուցչության) գրանցման (կամ գրանցումից հանելու) մասին որոշման ընդունման պահից հինգօրյա ժամկետում Կենտրոնական բանկը ծանուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը՝ վարկային կազմակերպության մասնաճյուղի (կամ ներկայացուցչության) գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

23. Կենտրոնական բանկը՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, մերժում է վարկային կազմակերպության Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղի գրանցման դիմումը կամ համաձայնություն չի տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպության օտարերկրյա պետության տարածքում մասնաճյուղի ստեղծմանը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ,

2) փաստաթղթերը ներկայացվել են թերի, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ թվում՝

ա. Հայաստանի Հանրապետության տարածքում բացվող մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը չեն համապատասխանում սույն կանոնակարգի 10-րդ գլխով նախատեսված պահանջներին,

բ. չի ներկայացվել մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

գ. մասնաճյուղի բացումը կհանգեցնի վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը,

3) մասնաճյուղի գրանցման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահի դրությամբ, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը:

24. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացուցչությունների բացման և գրանցման համար վարկային կազմակերպությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) վարկային կազմակերպության ներկայացուցչության գրանցման դիմումը,

2) վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից բաղկացած՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին,

3) ներկայացուցչություն ստեղծելու հիմնավորումը,

4) ներկայացուցչության կանոնադրությունը: Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված, ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 14-ի,

5) տարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

~~6) ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը: (ուժը կորցրել է 28.07.09թ. թիվ 228-Ն որոշմամբ)~~

25. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ մերժվում է վարկային կազմակերպության Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչության գրանցման դիմումը կամ համաձայնություն չի տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպության օտարերկրյա պետության տարածքում ներկայացուցչության ստեղծմանը, եթե՝

1) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,

2) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին,

3) դիմումի տրման պահին, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը,

4) Կենտրոնական բանկի կարծիքով ներկայացուցչության բացումը կհանգեցնի վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը,

5) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ներկայացուցչություն բացելու հիմնավորումները բավարար չեն:

26. Վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու (այդ թվում՝ ժամանակավորապես դադարեցնելու) դեպքում վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշման պատճենը՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու (այդ թվում՝ ժամանակավորապես դադարեցնելու) վերաբերյալ, ընդունման օրվանից եռօրյա ժամկետում պետք է ներայացվի Կենտրոնական բանկ:

Վարկային կազմակերպության մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցումից հանվում է մեկշաբաթյա ժամկետում:

**ԳԼՈՒԽ 5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

27. Գործող կամ ստեղծվող վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձը պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար՝ իրավաբանական անձի միջնորդագիրը,

2) վարկային կազմակերպության միջնորդությունը իրավաբանական անձի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը չառարկելու վերաբերյալ վարկային կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված վարկային կազմակերպության կնիքով (միայն գործող վարկային կազմակերպությունների համար),

3) վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կամ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի կամ վարչության նախագահի (այն դեպքերում, երբ այդ լիազորությունը վերապահված է նրանց՝ վարկային կազմակերպության կանոնադրությամբ) գրավոր հավաստիացումը, որ կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմակերպության

մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,

4) կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը,

5) կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կանոնադրությունը՝ մինչև գրանցման պահը կատարված փոփոխություններով,

6) տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ՝ համաձայն հավելված 8-ի,

7) իրավաբանական անձի վերջին երեք տարիների տարեկան և վերջին միջանկյալ՝

ա. հաշվապահական հաշվեկշիռը,

բ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,

գ. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,

դ. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,

ե. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար):

8) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին համապատասխան:

Եթե սույն կետի 7) ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի.

տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին, կամ

հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ կնշվի, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին,

9) հայտարարագիր վարկային կազմակերպության այլ մասնակիցների հետ փոխկապակցվածության վերաբերյալ,

10) ներդրման ենթակա միջոցների ծագման օրինականությունը հիմնավորող փաստաթղթեր,

11) եթե իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի/հոլդինգի/միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի նաև խմբի/հոլդինգի/միության կառուցվածքը,

12) եթե իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի/հողդինգի/միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա ներկայացվում են տվյալ խմբի/հողդինգի/միության վերջին ֆինանսական տարվա՝ ա. հաշվապահական հաշվեկշիռը,

բ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,

գ. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,

դ. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,

ե. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

«13) խմբի/հողդինգի/միության վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին համապատասխան (առկայության դեպքում):

Եթե սույն կետի 12) ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի.

տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին, կամ

հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ կնշվի, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

Եթե սույն կետի 7), 8), 11), 12) և 13) ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են իրավաբանական անձի կամ խմբի/հողդինգի/միության ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

14) տեղեկանք իրավասու մարմնի կողմից պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ պարտքերի կամ դրանց բացակայության վերաբերյալ (ռեզիդենտների համար),

15) հայտարարագիր «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի բացակայության մասին՝ համաձայն հավելված 3-2-ի,

16) նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձ-մասնակցի հայտարարագիրը՝ մասնակցություն ձեռք բերելուց հետո վարկային կազմակերպության ռազմավարության մեջ իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ,

17) տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի հետ փոխկապակցված

իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին՝ համաձայն հավելված 8-1-ի՝ իրավաբանական անձանց համար և 9-1-ի՝ ֆիզիկական անձանց համար:

28. Եթե վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 27 կետի 1), 2), 3), 4), 5), 7), 8), 15) և 16) ենթակետերով պատանջվող փաստաթղթերը:

Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ (ճանաչում) և Ստանդարտ և Փուրզ կամ Մուդիզ վարկանիշային գործակալությունների կողմից սահմանված «Ա-» կամ «Ա3» և բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

Եթե վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցությունը ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի 27-րդ կետի 1), 2), 3), 4), 14), 15) և 16) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

29. Ինչպես գործող, այնպես էլ նոր ստեղծվող վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձը պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում,

2) վարկային կազմակերպության միջնորդությունը անձի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը չառարկելու վերաբերյալ՝ վարկային կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված վարկային կազմակերպության կնիքով (միայն գործող վարկային կազմակերպության համար),

3) վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կամ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի կամ վարչության նախագահի (այն դեպքերում, երբ այդ լիազարությունը վերապահված է նրանց՝ վարկային կազմակերպության կանոնադրությամբ) գրավոր հավաստիացումը, որ կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմակերպության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,

4) տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի վերաբերյալ՝ համաձայն հավելված 9-ի,

5) ներդրման ենթակա միջոցների ծագման օրինականությունը հիմնավորող փաստաթղթեր,

6) հայտարարագիր վարկային կազմակերպության այլ մասնակիցների հետ փոխկապակցվածության վերաբերյալ,

7) հայտարարագիր՝ չմարված և չներված պարտավորությունների մասին,

8) հայտարարագիր «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի բացակայության մասին՝ համաձայն հավելված 3-1-ի,

9) նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձ-մասնակցի հայտարարագիրը՝ մասնակցություն ձեռք բերելուց հետո վարկային կազմակերպության ռազմավարության մեջ իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:

10) տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին՝ համաձայն հավելված 8-1-ի՝ իրավաբանական անձանց համար և 9-1-ի՝ ֆիզիկական անձանց համար:»:

30. Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող պետությունը պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնից միջնորդագիր՝ վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար,

2) կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող պետական իրավասու մարմնի որոշումը,

3) վարկային կազմակերպության միջնորդությունը՝ տվյալ պետական մարմնի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը չառարկելու վերաբերյալ՝ վարկային կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված վարկային կազմակերպության կնիքով (միայն գործող վարկային կազմակերպությունների համար),

4) վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կամ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի կամ վարչության նախագահի (այն դեպքերում, երբ այդ լիազարությունը վերապահված է նրանց՝ վարկային կազմակերպության կանոնադրությամբ) գրավոր հավաստիացումը, որ կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմակերպության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:

5) նշանակալից մասնակցություն ակնկալող պետության հայտարարագիրը՝ մասնակցություն ձեռք բերելուց հետո վարկային կազմակերպության ռազմավարության մեջ իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:

Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում իրար հետ փոխկապակցված անձանց կողմից կամ վարկային կազմակերպության մասնակցի հետ փոխկապակցված անձանց կողմից, ապա սույն գլխով սահմանված փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

31. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավել, քան երեք ամիս ժամկետով: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո

միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և մեկամսյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

32. Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալի մասնակցություն ձեռք բերելու դիմումը՝ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի:

33. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնություն տալու Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ է ընդունման պահից եռամսյա ժամկետով, եթե ավելի երկար ժամկետ նախատեսված չէ տվյալ որոշմամբ: Եթե մինչև եռամսյա ժամկետի (կամ Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված այլ ժամկետի) ավարտը վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու հնարավորություն տվող գործարքը (կամ գործարքները) չի իրականացվում կամ գործարքի (կամ գործարքների) իրականացումը հաստատող հիմքերը (փաստաթղթերը) չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

**ԳԼՈՒԽ 6. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ
ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՍԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

34. Որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը, այդ թվում որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման քննությունն (այսուհետև՝ քննություն) անց է կացվում թեկնածուների համար:

Սույն կանոնակարգի իմաստով թեկնածու են համարվում այն անձինք, որոնք դիմում են անցնելու որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում:

Թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությունն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեստավորման ծառայության կողմից (բացառությամբ՝ սույն կանոնակարգի 38-րդ կետով սահմանված դեպքերի) կամ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից:

35. Թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամի թեկնածուների) քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել հեռախոսով, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով, էլեկտրոնային փոստով (attestation@cba.am հասցեով) կամ գրավոր ձևով ուղարկված դիմումով (համաձայն Հավելված 11-ի):

Քննություններ անցկացնելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.

- 1) անունը, ազգանունը,
- 2) անձնագրի համարը,
- 3) քննությանը մասնակցելու ամիսը, օրը, ժամը (ցանկության դեպքում),
- 4) որակավորման տեսակը,
- 5) հեռախոսահամարը,
- 6) էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում):

Գրավոր ձևով դիմելու դեպքում թեկնածուն դիմումը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի քննությանը մասնակցելու՝ իր կողմից նշված օրվանից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ (քննությանը մասնակցելու օր նշելու դեպքում): Դիմումին կից պետք է ներկայացվի նաև թեկնածուի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը և պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

Թեկնածուի կողմից նշված օրը և/կամ ժամին քննության անցկացման անհնարինության դեպքում կամ թեկնածուի կողմից քննությանը մասնակցելու օր և/կամ ժամ չնշելու դեպքում Տեստավորման ծառայության աշխատակիցը դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան (Կենտրոնական բանկում հերթագրվելու օրվան) հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է թեկնածուին քննության անցկացման հնարավոր այլ օրվա և/կամ ժամի մասին: Ընդ որում, այն չի կարող գերազանցել դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան (Կենտրոնական բանկում հերթագրվելու օրվան) հաջորդող 15 աշխատանքային օրը, իսկ թեկնածուի կողմից քննությանը մասնակցելու ավելի ուշ օր նշելու դեպքում, այդ օրվան հաջորդող 15 աշխատանքային օրը:

Թեկնածուները քննությանը կարող են մասնակցել քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը (բացառությամբ գրավոր ձևով ուղարկված դիմումով հերթագրվելու դեպքի).

- 1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճեն,
- 2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ,
- 3) դիմում՝ համաձայն հավելված 11-ի:

36. Քննությունն անցկացվում և համապատասխան որակավորման վկայական տրվում է հետևյալ պաշտոններում որպես ղեկավար աշխատելու համար.

1) վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի տեղակալ (վարչության նախագահի տեղակալ), տնօրինության (վարչության) անդամ,

2) վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ,

3) վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (վերստուգող), վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

37. Վարկային կազմակերպության (ներառյալ խնայողական միությունները) գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության (վարչության) անդամ՝ առանց տնօրինության (վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), գործադիր տնօրենի տեղակալի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրինության (վարչության) անդամ:

Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ:

Բանկի ներքին աուդիտի ղեկավարի, բանկի ներքին աուդիտի անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (վերստուգող), վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

~~Բանկի ներքին աուդիտի անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամ (ուժը կորցրել է 28.07.09թ. քիվ 228-Ն որոշմամբ)~~

Վարկային կազմակերպության (ներառյալ խնայողական միությունները) վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից:

38. Վարկային կազմակերպության խորհրդի նախագահը, խորհրդի անդամները որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման համար անցնում են հարցազրույց Կենտրոնական բանկի խորհրդի նիստում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման հարցազրույցի անցկացումը Կենտրոնական բանկի խորհուրդն անհրաժեշտ չի համարում: Կենտրոնական բանկը կարող է հարցազրույցի չհրավիրել խորհրդի այն անդամներին և նախագահին, որոնց մասնագիտական գիտելիքները, աշխատանքային փորձը, հեղինակությունը և համբավը Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով բավարար են վարկային կազմակերպության խորհրդի անդամներին և նախագահին առանց հարցազրույցի անցկացման գրանցելու համար: Հարցազրույցին մասնակցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 50-րդ կետով սահմանված փաստաթղթերը: Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կամ անդամի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

39. Գրավոր (տեստային) քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով: ~~Քննության ընթացքին կարող են հետևել հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հանձնաժողովի համաձայնությամբ՝ Կենտրոնական բանկի այլ աշխատակիցներ: (ուժը կորցրել է խորհրդի 28.07.09թ. քիվ 228-Ն որոշմամբ)~~

1) Տեսուրը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի 8-րդ գլխով սահմանված թեմաների ցանկի հիման վրա:

2) Տեսուրը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ: Տեստային հարցերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:

3) Վարկային կազմակերպության ղեկավարների քննության տեսուրը կազմվում են՝ ստուգելու թեկնածուի իմացությունը վարկային կազմակերպության լիցենզավորման, գործունեության, գործունեության կարգավորման ու վերահսկողության, հաշվապահական հաշվառման, ֆինանսների, հարկային օրենսդրության, դրամավարկային քաղաքականության, ընդհանուր տնտեսագիտության ոլորտներում:

4) Տեսուրը տարբերակվում են ըստ քննություն հանձնող ղեկավարների թեկնածուների (ելնելով նրանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության չափանիշներից) հետևյալ խմբերի՝

ա. վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, տնօրինության (վարչության) նախագահ, գործադիր տնօրենի տեղակալ, տնօրինության (վարչության) նախագահի տեղակալ, վարչության անդամ (100 հարց),

բ. վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ (100 հարց),

գ. վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (վերստուգող), հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ (100 հարց):

5) Տեսուի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

6) Տեսուերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է չորս պատասխան, որոնցից մեկն է ճիշտ:

7) Տեսուի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը, ինչպես նաև հարցին չպատասխանելը՝ զրո միավոր:

8) Հայերեն լեզվին չտիրապետող ղեկավարների թեկնածուների գրավոր քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում՝ Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Կենտրոնական բանկի հանձնաժողովի թույլտվությամբ հայերեն լեզվին չտիրապետող ղեկավարների թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել:

40. Տեստային քննությունն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում, որն ապահովված է համապատասխան պայմաններով:

1) Թեկնածուին թույլատրվում է մասնակցել տեստային քննությանը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում: Թեկնածուի տվյալները և

համապատասխան տեստերը ընդհանուր համակարգում մուտքագրելուց հետո ստուգվում է թեկնածուի ինքնությունը և թույլատրվում է նրան մուտք գործել տեստավորման անցկացման սենյակ՝ ըստ ցուցակի նստեցնելով համապատասխան համակարգչի մոտ: Թեկնածուների մուտքը սենյակ դադարեցվում է տեստավորումը սկսելուց տասը րոպե առաջ:

- 2) Թեկնածուներին տրվում են բացատրություններ տեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:
- 3) Տեստավորման սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից առավելագույնս ճիշտ) պատասխան:
- 4) Գրավոր քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից, ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից:
- 5) Քննության ամբողջ ընթացքը տեսախցիկների միջոցով վերահսկվում է Տեստավորման ծառայության և Կենտրոնական բանկի անվտանգության համար պատասխանատու վարչության աշխատակիցների կողմից:
- 6) Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև տեստավորման առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին հանձնվում է իր հանձնած տեստի վերաբերյալ հաշվետվությունը՝ արտահայտված տոկոսով՝ երկու օրինակից, որոնք ստորագրվում են թեկնածուի կողմից: Մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

41. Տեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ՝

1) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում արձանագրվում է բացասական եզրակացություն,

2) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում արձանագրվում է դրական եզրակացություն, և նրան տրվում է համապատասխան որակավորման վկայական:

~~42. Տեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է հանձնաժողովը: (ուժը կորցրել է ԿԲ խորհրդի 28.07.09թ. թիվ 228-Ն որոշմամբ)~~

~~43. Թեկնածուները կարող են բողոքարկել անցկացված քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի: **Գիմուճը պետք է ուսումնասիրվի՝ ղեկավարների՝ որակավորման ստուգման և գրանցման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ներկայացվի հանձնաժողովի քննարկմանը (ուժը կորցրել է ԿԲ խորհրդի 28.07.09թ. քիվ 228 Ն որոշմամբ):**~~

~~44. Անցկացված քննության արդյունքներով և հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, թեկնածուին տրվում է որակավորման վկայական (ուժը կորցրել է ԿԲ խորհրդի 28.07.09թ. քիվ 228 Ն որոշմամբ):~~

45. Որակավորման վկայականը տրվում է քննության դրական արդյունք ապահովված թեկնածուներին թղթային ձևով՝ քննությունը հանձնելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում (համաձայն Հավելված 12-ի): Որակավորում ստացած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում:

46. Կենտրոնական բանկի որակավորման վկայական ունեցող անձանց ցուցակում նշվում են որակավորված անձի անունը, ազգանունը, վկայականի տեսակը, վկայականի համարը, վկայականի տրման ամսաթիվը և վկայականի ավարտի ամսաթիվը: Որակավորված անձանց ցուցակը թարմացվում է որակավորված անձանց որակավորման ժամկետը լրանալու կամ որակավորումից զրկվելու օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

47. Վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման վկայականը տրվում է ստորագրման պահից հաշված 3 (երեք) տարի ժամկետով, բացառությամբ խորհրդի նախագահի և անդամների: Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:

47.1. Վարկային կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև որակավորման վկայական ունեցող այլ անձինք, որակավորման վկայականը կորցնելու դեպքում կարող են այդ մասին գրավոր հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում Կենտրոնական բանկի նախագահի անունով: Կորցրած վկայականը համարվում է անվավեր, իսկ դրա փոխարեն դիմումն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում տրվում է որակավորման նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրումով:»:

48. Տրված որակավորման վկայականները հաշվառվում են Կենտրոնական բանկի համապատասխան մատյանում, որտեղ գրառվում են որակավորում ստացած անձանց անունը, ազգանունը, հաշվառման վայրը, բնակության վայրը (գրառվում է հաշվառման վայրից տարբեր լինելու դեպքում), պաշտոնը:

49. Թեկնածուն կարող է դիմել Կենտրոնական բանկ նաև մեկից ավելի ղեկավարների համար նախատեսված քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայականներ ստանալու համար:

1) Որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

2) Կենտրոնական բանկը հարցազրույցը անցկացնում է թեկնածուի կողմից փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու (Կենտրոնական բանկի կողմից գրանցելու) պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 7. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

50. Վարկային կազմակերպության ղեկավարներին կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

ա) ղեկավարներին գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին վարկային կազմակերպության միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 2-ի,

բ) իրավասու մարմնի որոշումը ղեկավարների նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

Ընդ որում, սույն կանոնակարգի հավելված 2-ով սահմանված միջնորդագրի 2.6, 2.8-2.10, 3.3 ենթակետերում, ինչպես նաև 5-9-րդ կետերում սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունը վարկային կազմակերպությանը հայտնի դառնալուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը: Սույն կանոնակարգի հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը (տեղեկանքը) և սույն կետով սահմանված իրավասու մարմնի որոշման սքան արված տարբերակը վարկային կազմակերպության կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով: Ընդ որում սույն կանոնակարգի հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆորմատով:

51. Եթե ղեկավարի թեկնածուի գրանցման համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն Կանոնակարգի հավելված 1-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում վարկային կազմակերպությունը դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին ղեկավար գրանցելու միջնորդությամբ, ապա հավելված 1-ով սահմանված միջնորդագիրը՝ սույն կանոնակարգի 50-րդ կետով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն միջնորդագրի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

51.1 Սույն Կանոնակարգի 50-րդ կետով նախատեսված միջնորդագրում ներկայացված տեղեկությունների շրջանակում Կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, եթե քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տեղեկություններին (տվյալներին) Կենտրոնական բանկը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով:

52. Վարկային կազմակերպության ղեկավարի կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ղեկավարները պետք է ունենան Կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան որակավորման վկայական:

53. Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 38-րդ կետով նախատեսված Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկն անհրաժեշտ չի համարում հարցազրույցի անցկացումը, որի դեպքում խորհրդի նախագահը և անդամները

գրանցվում են առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում անցնելու:

54. Վարկային կազմակերպության ղեկավարի (բացառությամբ խորհրդի նախագահի և անդամների) թեկնածուի գրանցման համար հանձնաժողովն անցկացնում է հարցազրույց հանձնաժողովի նիստում: Գրանցման պահին վարկային կազմակերպության ղեկավարը պետք է իրազեկ լինի ֆինանսական համակարգի, մասնավորապես՝ վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքների, այլ իրավական ակտերին, ինչպես նաև վարկային կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերին: Բացի այդ, գրանցման պահին.

1) վարկային կազմակերպության խորհրդի նախագահը պետք է ունենա բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 1 տարին՝ ղեկավար պաշտոնում, բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 4 տարվա աշխատանքային փորձ, որից 2 տարին՝ ղեկավար պաշտոնում,

2) վարկային կազմակերպության գործադիր տնօրենը (վարչության նախագահը), գլխավոր հաշվապահը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը պետք է ունենան բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 1 տարին՝ ղեկավար պաշտոնում,

3) վարկային կազմակերպության խորհրդի անդամները, գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալը, վարչության անդամները, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, գլխավոր հաշվապահի տեղակալը պետք է ունենան առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ:

55. Սույն կանոնակարգի 54-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է գրանցման պահին նախորդող 10 տարիներին, բացառությամբ բարձրագույն կրթության կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայականի բացակայության, կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած չլինելու համար նախատեսված աշխատանքային փորձի:

56. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 54-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և (կամ) բարձրագույն կրթություն, ապա նա իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար իր մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովի դրական եզրակացությամբ Կենտրոնական բանկի նախագահն իրավունք ունի որոշել գրանցել անձին համապատասխան պաշտոնում, եթե գտնում է, որ անձի մոտ առկա է այդ պաշտոնում աշխատելու համար բավարար գիտելիքներ ու հմտություններ:

57. Վարկային կազմակերպության ղեկավարը գրանցվում է Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Վարկային կազմակերպության ղեկավարի գրանցման համար նշանակություն ունեցող փաստեր պարզաբանելու նպատակով 15-օրյա ժամկետը կարող է կասեցվել, բայց ոչ ավելի քան մեկ անգամ և առավելագույնը երեք ամիս ժամկետով:

58. Եթե վարկային կազմակերպությունը դիմում է Կենտրոնական բանկի ղեկավարի թեկնածուին գրանցելու համար, որը նախկինում գրանցվել է Կենտրոնական բանկում որպես ղեկավար, ապա տվյալ թեկնածուն հրավիրվում է հանձնաժողովի նիստին միայն, եթե Կենտրոնական բանկը համարում է անհրաժեշտ:

59. Վարկային կազմակերպության ղեկավարների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե ղեկավարների թեկնածուները՝

- 1) ունեն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն,
- 2) դատարանի կողմից զրկված են ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
- 3) սնանկ են ճանաչվել կամ ունեն չմարված (չներված) պարտավորություններ,
- 4) քրական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
- 5) չեն համապատասխանում սույն կանոնակարգի 54-րդ կետով սահմանված չափանիշներին,
- 6) եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ են և չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին:

60. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ վարկային կազմակերպության ղեկավարը հանվում է գրանցումից, եթե.

- 1) որակավորման վկայականի ժամկետը լրացել է, և ղեկավարը չի ստացել նոր որակավորման վկայական,
- 2) ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,
- 3) վարկային կազմակերպությունը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
- 4) ի հայտ են եկել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերը:

Վարկային կազմակերպությունը իր ղեկավարներին աշխատանքից ազատելու դեպքում, տասը աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է դիմել Կենտրոնական բանկ՝ ղեկավարին գրանցումից հանելու միջնորդությամբ:

61. Վարկային կազմակերպության միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար վարկային կազմակերպությունները պարտավոր են փոփոխություններ կատարելու վերաբերյալ վարկային կազմակերպության իրավասու մարմնի կողմից որոշում ընդունելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ վարկային կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված վարկային կազմակերպության կնիքով,

2) իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

62. Եթե վարկային կազմակերպության ղեկավարը գրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից գրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես վարկային կազմակերպության ղեկավար :

63. Սույն կանոնակարգի իմաստով վարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար են համարվում այն անձինք, որոնք առանց համապատասխան պաշտոնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման իրականացում են վարկային կազմակերպության ղեկավարի պարտականություններ:

64. Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող են նշանակվել (նշված պարտականությունները կարող են կատարել) միայն տվյալ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալը, վարչության նախագահի տեղակալը, վարչության (տնօրինության) անդամը:

65. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող է կատարել) տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող վարկային կազմակերպության այլ աշխատակիցը:

66. Ղեկավարի պաշտոններում առանց որակավորման վկայականի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետ կարող է սահմանվել ոչ ավելի, քան 3 ամիս: Բացառություն են կազմում վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարները, որոնք առանց որակավորման վկայականի չեն կարող պաշտոնավարել: Որակավորման վկայական ունեցող, սակայն Կենտրոնական բանկի կողմից չգրանցված անձինք կարող են աշխատել որպես ղեկավարի պաշտոնակատար ոչ ավել քան 3 ամիս: Բացառություն են կազմում վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատարները, որոնք առանց Կենտրոնական բանկում գրանցվելու չեն կարող պաշտոնավարել:

67. Նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնին նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

68. Նշված եռամսյա ժամկետում վարկային կազմակերպության կողմից նշանակված որակավորման վկայական չունեցող վարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պետք է սույն կանոնակարգով սահմանված կարգով անցնի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննություն և գրանցվի Կենտրոնական բանկում, իսկ որակավորման վկայական ունեցողը՝ գրանցվի Կենտրոնական բանկում:

69. Վարկային կազմակերպության խորհրդի քանակական կազմը վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով նախատեսված թվից պակաս լինելու դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում թափուր մնացած տեղերի համար խորհրդի անդամի նոր թեկնածուներին՝ սույն կանոնակարգով

սահմանված կարգով: Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների թեկնածուներն իրավունք ունեն իրականացնել համապատասխանաբար խորհրդի նախագահի և խորհրդի անդամի պարտականությունները միայն Կենտրոնական բանկում համապատասխան պաշտոնում գրանցման պահից: Խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

ԳԼՈՒԽ 8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

70. Ղեկավարները Կենտրոնական բանկում որակավորման ստուգումը անցնում են ստորև աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում՝ «+» նշանը նշանակում է՝ տվյալ հարցը վերաբերում է, «-» նշանը՝ չի վերաբերում:

Գիտելիքների և ունակությունների բնագավառները	Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, (արչության նախագահ, գործադիր տնօրենի, վարչության նախագահի) տեղակալ, վարչության անդամ	Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ	Վարկային կազմակերպություն տնօրենների խորհրդի նախագահ, խորհրդի անդամներ
1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք			
1) Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և այլ խնդիրները	+	+	+
2) Կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները և վերահսկողությունը	+	+	+
2. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք և ԿԲ նորմատիվ ակտեր՝ Կանոնակարգեր 13, 14, 15			
1) Վարկային կազմակերպության և դրա գործունեության բնորոշումը	+	+	+
2) Վարկային կազմակերպության կազմակերպաիրավական ձևերը	+	+	+
3) Վարկային կազմակերպության գործունեության սահմանափակումները	+	+	+
4) Վարկային կազմակերպությունների տիպերը	+	+	+
5) Վարկային կազմակերպության գրանցումը և լիցենզավորումը	+	+	+

6) Վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման մերժման հիմքերը	+	+	+
7) Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը	+	+	+
8) Վարկային կազմակերպության լիցենզիան	+	+	-
9) Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը	+	+	-
10) Վարկային լազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման մերժման հիմքերը	+	+	-
11) Վարկային կազմակերպությունների և դրանց առանձին խմբերի համար թույլատրվող ֆինանսական գործառնությունները	+	+	+
12) Խնայողական միության համար թույլատրվող ֆինանսական գործառնությունները	-	-	+
13) Վարկային կազմակերպության կողմից իրականացվող վարկավորման գործարքները, ձեռնարկատիրական և սպառողական վարկերի , փոխառությունների տրամադրման գործարքների բնորոշումը	+	+	-
14) Վարկային կազմակերպության ղեկավարները, նրանց մասնագիտական չափանիշներն ու որակավորման կարգը	+	+	+
15) Վարկային կազմակերպությունների կանոնադրություններին ներկայացվող պահանջները, կանոնադրություններում կատարված փոփոխությունների ուժի մեջ մտնելը	+	-	-
16) Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման ընթացակարգը	+	+	-
17) Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռք բերելու սահմանափակումները	+	+	-
18) Փոխկապակցված և կապված անձինք	+	+	
19) Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի համալրման կարգը	+	+	-
20) Վարկային կազմակերպությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց ուժի մեջ մտնելը, սահմանաչափերը, հաշվարկման կարգը և հաշվարկում մասնակցող տարրերի կազմը	+	+	+
21) Խնայողական միությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց ուժի մեջ մտնելը, սահմանաչափերը, հաշվարկման կարգը և հաշվարկում մասնակցող տարրերի կազմը	-	-	+
22) Վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողությունը	+	+	+
23) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման աղբյուր հանդիսացող միջոցների շրջանառության կանխարգելումը վարկային կազմակերպություններում	+	+	-
24) Վարկային կազմակերպության աուդիտային ստուգումը	+	+	+
25) Ֆինանսական հաշվետվությունների և աուդիտային եզրակացության հրապարակումը	+	+	+
26) Օրենսդրության խախտումները և դրանց համար կիրառվող պատասխանատվության միջոցները	+	+	+
27) Վարկային կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի գործունեության վալրի տեխնիկական հագեցվածության պահանջները	+	-	-
28) Վարկային կազմակերպության կողմից բանկերում	+	+	-

բանկային հաշվի բացումը			
29) Վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ներկայացման ժամկետները	+	+	-
30) Վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը	+	+	+
3. «Բանկերի և վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենք			
1) Վարկային կազմակերպության անվճարունակության և սնանկության հիմքերը	+	+	+
2) Վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի խնդիրները	+	+	-
4. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք			
1) Բանկային գաղտնիք	+	+	+
2) Բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակումը, դրա արգելումը, տրամադրումը	+	+	+
3) Բանկային գաղտնիքի շրջանառությունը բանկերի և վարկային կազմակերպությունների միջև	+	+	-
5. Վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ			
1) Ակտիվների դասակարգումը	+	+	-
2) Ընդհանուր և հատուկ պահուստավորում	+	+	-
3) Չաշխատող ակտիվներ, դրանց գծով տոկոսների հաշվեգրման դադարեցում, չճանաչված տոկոսային եկամուտ	+	+	-
4) Ապահովվածություն չունեցող (բյանկային) ակտիվներ	+	+	-
5) Տոկոսների կապիտալացում, վերանայված պայմաններով ակտիվներ, վերաֆինանսավորված ակտիվներ	+	+	-
6) Ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվների և տոկոսների դուրսգրում	+	+	-
6. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգ			
1) Ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը	+	+	-
2) Ժամկետային ինվեստիցիոն արժեթղթերի դասակարգումը	+	+	-
3) Ինվեստիցիոն արժեթղթերի անհուսալի ճանաչումը	+	+	-
4) Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի օգտագործումը	+	+	-
7. Այլ			
1) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առանձնահատկությունները վարկային կազմակերպություններում, կասկածելի գործառնությունների դադարեցումը և կասեցումը	+	+	+
2) Արժուքային կարգավորումը և վերահսկողությունը ՀՀ-ում (ռեգիլենտություն, ոչ ռեգիլենտություն, ընթացիկ և կապիտալի հաշվի արժուքային գործառնություններ)	+	+	-
3) Ֆինանսական գործակիցներ	+	+	+
4) Վարկային կազմակերպության շահութաբերության և եկամտաբերության ցուցանիշները	+	+	
5) Վարկային ռեգիստրին տեղեկությունների տրամադրումը, օգտագործումը և պահպանումը	+	+	+
6) Ֆինանսական ռիսկերի գնահատման մեթոդները	+	-	-
7) Իրավիճակային խնդիրներ (օրինակ՝ պարտատոմսերի եկամտաբերություն, իրացվելիության ճեղքվածք)	+	-	-

8) Քաղաքացիական օրենսգիրք (վարկային պայմանագրի սահմանումը, արժեթղթերի տեսակները, սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը, ֆինանսական լիզինգ, ֆակտորինգ)	+	+	+
9) Քաղաքացիական օրենսգիրք (վարկային պայմանագրի սահմանումը, սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը) (ուժը կորցրել է 28.07.09թ. քիվ 228-Ն որոշմամբ)	-	-	-
10) Ածանցյալ գործիքներ	+	+	-
11) Ակտիվների և պասիվների կառավարում. ֆինանսական գործառնություններ (ակտիվային գործառնությունների տարանջատումը պասիվայինից)	+	+	-
8. Հաշվապահական հաշվառում և հարկային դաշտ			
1) Հաշվապահական հաշվառման կարգավորումը	+	+	+
2) Հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը	+	+	-
3) Հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները	-	+	-
4) Ֆինանսական հաշվետվություններ և դրանց տարրերը	+	+	+
5) Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը	-	+	-
6) ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտները	-	+	-
7) Վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունների հաշվապահական ձևակերպումները	-	+	+
8) Խնայողական միությունների կողմից իրականացվող գործառնությունների հաշվապահական ձևակերպումները	-	+	-
9) Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը	-	+	-
10) Հաշվետու ժամանակաշրջան	-	+	-
11) Գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները	-	+	-
12) Հիմնական միջոցների և մաշվածության հաշվառումը, վերագնահատումը	-	+	-
13) Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը	-	+	-
14) Ակտիվների և պարտավորությունների գնահատումը	-	+	-
15) Հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները	+	+	+
16) Հարկային արտոնությունների ձևերը, ավելացված արժեքի հարկի արտոնությունները ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների համար	+	+	-
17) Շահութահարկի, որպես հարկային գործակալ՝ եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի հաշվարկման կարգը, դրույքաչափերը և վճարումը	+	+	-
18) Հարկային պարտավորություններից ավել բյուջե վճարված գումարները հարկ վճարողին հետ վերադարձնելու կարգը	+	+	-
19) Վարկային կազմակերպությունների պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտման համար	+	+	+
20) Եկամուտ և ծախս համարվող տարրերը ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի	-	+	-
21) Վարկային կազմակերպությունում գույքահարկով հարկվող օբյեկտներ	-	+	-
22) Սոցիալական ապահովագրության վճարները	-	+	-
9. Դրամավարկային քաղաքականություն			
1) Դրամավարկային քաղաքականության նպատակը և գործիքները	+	-	-
2) Ազգային հաշիվների համակարգը	+	-	-

3) Նախորդ տարիների մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները	+	-	-
4) Իրական և անվանական փոխարժեք	+	-	-
5) Սպառողական գների ինդեքս	+	-	-
6) Դրամական բազա և փողի զանգված	+	-	-
7) Վճարային հաշվեկշիռ	+	-	-
10. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք			
1) Բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության կառավարման մարմինները	+	+	-
2) Ընդհանուր ժողովի, խորհրդի, գործադիր մարմնի և վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները, պատասխանատվությունները, դրանց միջև փոխհարաբերությունները	+	+	-
11. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք			
1) ՍՊԸ-ների գործադիր մարմինը և նրա իրավասությունները	+	+	-
2) Ընդհանուր ժողովի, խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունների և պարտականությունների բաշխումը, դրանց միջև փոխհարաբերությունները	+	+	-

ԳԼՈՒԽ 9. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

71. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները պետք է Կենտրոնական բանկ գրանցման ներկայացնեն հետևյալ փոփոխությունները՝

1) վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) կանոնադրություններում կատարված փոփոխությունները,

2) ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները,

3) օրենքով կամ Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված այլ փոփոխություններ:

Վարկային կազմակերպության ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված կարգով:

72. Կենտրոնական բանկը պարտավոր է վերոհիշյալ փոփոխությունների գրանցման համար սույն գլխով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից՝ Կենտրոնական բանկի որոշմամբ՝ մեկամսյա ժամկետում, գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը:

Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և մեկամսյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

Կենտրոնական բանկում գրանցվող փաստերը հաստատող Կենտրոնական բանկի իրավական ակտերը Կենտրոնական բանկը կարող է անվավեր ճանաչել, եթե վարկային կազմակերպությունը սույն օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված փոփոխությունները գրանցելու նպատակով Կենտրոնական բանկ է ներկայացրել կեղծ կամ անարժանահավատ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

Վարկային կազմակերպության և դրա տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկում գրանցման պահից:

73. Վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանումների կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար վարկային կազմակերպությունները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ վարկային կազմակերպության կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված վարկային կազմակերպության կնիքով,

2) վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանման փոփոխված կանոնադրությունը (3 օրինակից): Եթե փոփոխությունը վերաբերում է վարկային կազմակերպության այն ներքին իրավական ակտերին, որոնց հղում է կատարված կանոնադրության մեջ, ապա կից պետք է ներկայացվեն նաև համապատասխան ակտերը: Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված, ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 14-ի;

4) վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանման գործունեության վայրի փոփոխության դեպքում՝ նաև տարածքի սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքի վկայականի պատճենը կամ համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագիրը, սույն կանոնակարգի 10-րդ գլխով սահմանված պահանջներին տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 15-ի: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

73.1 Վարկային կազմակերպության ֆիրմային անվանման փոփոխությունը գրանցելու համար բացի սույն կանոնակարգի 73-րդ կետում նշված փաստաթղթերից (ինչպես վարկային կազմակերպության, այնպես էլ նրա տարածքային ստորաբաժանումների համար (առկայության դեպքում)) Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

- 1) ֆիրմային անվանման գրանցման հայտ՝ համաձայն հավելված 16-ի,
- 2) «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող փաստաթղթերը
- 3) լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում և լիցենզիայի վերաձևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը
- 4) վարկային կազմակերպության գրանցման, տարածքային ստորաբաժանումների գրանցման վերաձևակերպված վկայականների համար պետական տուրքի վճարման անդորրագրերը:

74. Վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանման գործունեության վայրի փոփոխության գրանցման համար պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո Կենտրոնական բանկի վերահսկողների և պատասխանատու այլ աշխատակիցերի կողմից տեղերում կատարվում է տարածքի և տեխնիկական հագեցվածության ստուգում, որի արդյունքում կազմվում են վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանման գործունեության նոր տարածքի և տեխնիկական հագեցվածության՝ սույն կանոնակարգի 10-րդ գլխով սահմանված չափանիշներին, համապատասխանելու մասին փաստաթուղթ:

75. Վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի ի գիտություն է ներկայացնում վարկային կազմակերպության գործունեության ներքին իրավական ակտերի փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին իրավական ակտերը (վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը)՝ իրավասու մարմնի կողմից այդ փոփոխությունները հաստատելուց հետո 15 օրյա ժամկետում: Փոփոխված ներքին իրավական ակտերը Կենտրոնական բանկ են ներկայացվում վարկային կազմակերպության կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացրած վարկային կազմակերպության կնիքով (առկայության դեպքում):

76. Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում վարկային կազմակերպության փոփոխված կանոնադրության գրանցման համար վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 73 կետով նախատեսված փաստաթղթերը (բացառությամբ 4) ենթակետով սահմանված փաստաթղթերի), տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին միջոցների առկայության վերաբերյալ, ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման հայտարարագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության համար):

ԳԼՈՒԽ 10. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՍՆԱՃՅՈՒԼԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ԵՎ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՍԱՄԲ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

77. Վարկային կազմակերպությունը կամ դրա տարածքային ստորաբաժանումը պետք է ունենա՝

1) վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք:

Վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման փուլում Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի նաև տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի գրավոր համաձայնությունը կամ պարտավորագիրը՝ վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման դեպքում տարածքը նրան տրամադրելու վերաբերյալ:

2) կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի

պահպանության համար դրամարկղային հանգույց(առանձնացված վարկային կազմակերպության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)` դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի և այլ արժեքների, գրավադրված և ի պահ ընդունված արժեքների պահպանության հիմնական դրամապահոց է` իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասսացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր` նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ այլ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու այլ բանկ, վարկային կազմակերպություն կամ այլ բանկի, վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանում: Դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասսացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և վարկային կազմակերպությունում կամ վարկային կազմակերպության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին:

Եթե վարկային կազմակերպության կամ դրա մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված է, որ վերջինս «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, ապա դրամարկղային հանգույցի առկայությունը պարտադիր չէ:

3) Կանխիկ դրամով և (կամ) այլ արժեքներով գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունը և դրա մասնաճյուղը պետք է ունենան շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր: Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի համապատասխան կազմակերպությանը, իսկ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ` հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե վարկային կազմակերպությունը կամ վարկային կազմակերպության մասնաճյուղը գտնվում է ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգ ունեցող տարածքներում, ապա տարածքի շուրջօրյա ահազանգման համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգին` հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

4) վարկային կազմակերպությունը և դրա տարածքային ստորաբաժանումը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ: Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի հաշվառումից հետո` մասնաճյուղի հաշվառման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք չեն ունենա գլխավոր հաշվապահ` համակարգչային ցանցը պետք է միացված լինի մասնաճյուղին` վերջինիս հաշվառման փաստաթղթերի ներկայացման պահին:

77.1 Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է միայն իր դրամարկղում: Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը դրամարկղի ներսում փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի: Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը դրամարկղից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշում է միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:

78. Վարկային կազմակերպությունը կարող է սույն կանոնակարգի 77-րդ կետով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն ունենալ «Բանկերս Բլանկետ Բոնո (BBB)» ապահովագրության պայմանագիր հետևյալ ռիսկերի գծով.

1) ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,

2) վարկային կազմակերպության գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում վարկային կազմակերպության տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

Նշված ռիսկերի գծով ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել վարկային կազմակերպության ակտիվների 1 տոկոսից:

Ընդ որում «Բանկերս Բլանկետ Բոնո (BBB)» ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-
- Մուդիզի «Բաա» խմբի՝ Բաա3
- Ա. Մ. Բեստի «Բ» խմբի՝ Բ+
- Դաֆֆ և Ֆելփզի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-
- Վեիսսի «Բ» խմբի՝ Բ-
- Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-:

79. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններին թույլատրվում է իրենց գործունեության տարածքից դուրս իրականացնել վարկերի տրամադրման և/կամ վարկերի հավաքագրման գործընթացները հետևյալ բոլոր պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

1) վարկերի տրամադրումը և/կամ վարկերի հավաքագրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում («գյուղական համայնք» սահմանվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 2-ի),

2) վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանումից, այլ վարկային կազմակերպությունից կամ բանկից կանխիկ միջոցները սույն կետի 1) ենթակետով նշված գյուղական վայրեր և հետ թույլատրվում է տեղափոխել միայն զինված ոստիկանի ուղեկցությամբ

կամ ինկասատորի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագրի հիման վրա: Վերոնշյալ պայմանագրերի պատճենները պետք է ներկայացվեն Կենտրոնական բանկ: Նշված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո անմիջապես կնքվում են նոր պայմանագրեր, և 15-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ են ներկայացվում դրանք կամ նախկին պայմանագրերի ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթեր:

Գյուղական վայրում սույն կետի 1) ենթակետով նշված գործունեությունը սկսելուց կամ դադարեցնելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում վարկային կազմակերպությունը պետք է այդ մասին տեղեկացնի Կենտրոնական բանկին:

3) վարկային կազմակերպության աշխատակիցներից, զինված ոստիկանից կամ ինկասատորից կազմված մեկ խմբի մոտ առկա գումարը օրվա ընթացքում չպետք է գերազանցի 5 միլիոն ՀՀ դրամը:

Գլուխ 11. Այլ դրույթներ

80. Եթե գրանցման և լիցենզավորման փուլում սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով և սույն կանոնակարգի 2, 3-1, 3-2, 8 և 9 հավելվածներով ներկայացված տեղեկատվությունը փոխվել է, վարկային կազմակերպությունը պետք է մեկ շաբաթյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել փոփոխված փաստաթղթերը:

81. Սույն կանոնակարգով սահմանված պահանջների չկատարման դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները, ինչպես նաև դրանց ղեկավարները կրում են պատասխանատվություն՝ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների: